

ՎԵՐԴԻ

ՀԱՐՈՒՍՏՆ  
ՈՒ  
ԳԻԺ ԾԱՌԱՆ



891.995

p - 33

ՊԵՏԿՐԱՏ



ՎԵՐԴԻ

30 MAY 2011

891.9945

P-33

ur

ՀԱՐՈՒՍՏՆ  
ՈՒ  
ԳԻԺ ԾԱՌԱՆ

Նկարներ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



ZUSAMMENFAS

ZUSAMMENFAS  
ZUSAMMENFAS  
36 R 64.4.4

1940







խատաւարձից կզրչեմ, և մեջքիցդ ել մի շերտ կաշի քեր-  
թելով—կհեռացնեմ... Հիմա թե համաձայն ես, ասա պա-  
ման կապենք, անցիր աշխատանքի. թե չե, թող գնա  
զործիդ:

Խելոքն ինքն իրան մտածեց, «Ինչ կա վոր. ինչ ել  
ասեն կկատարեմ. մի տարի յե, վոնց ել լինի ամեն նեղու-  
թյան կղիմանամ, ու հարյուր մանեթը կստանամ, կտանեմ  
մի դուլդ յեղ կառնեմ, ու մեզ համար լավ կապրենք...»  
հետո դարձավ հարստին թե՝

— Համաձայն եմ, արի պայման կապենք:

Ու պայմանը կապեցին, խելոքը մնաց հարուստի մոտ  
ծառա:

Հարուստը ծառային անասունի տեղ բանացնում եր.  
խակ նա լուռ և անտրտուռ լուռ ամեն մի տան-  
ջանք ու նեղութուն...

Այդպես ժամանակն անցավ ու քիչ մնաց տարին լրա-  
նար, յերբ մի որ հարուստը դարձավ ծառային թե՝

— Այ տղա, առավոտն արորը կլծես, ու մեր շանն  
եկ հետըդ առած, կգնաս դաշտ. և վորտեղ շունը նստի,  
այնտեղ ել կսկսես վարել:

— Ետտ լավ, — ասաց ծառան:

Մի Լուս որը ծառան արորը լծեց, ու շանը կանչելով  
գնացին դաշտ. Վոր հառան դաշտը, շունը բարձրացավ ու  
նստեց մի մեծ ժայռի վրա... Խեղճ ծառան մնաց շվարած.  
Ինչ աներ, հո չեր կարող բարձրանալ ժայռի վրա ու վար  
անել... Ծառահատված յեղները լծից արձակեց, վոր արա-  
ծեն, ինքն ել ծնկները գրկեց ու նստեց:

Այդպես մնաց մինչև ճաշ, ճաշին տիրոջ «ղջիկը հաց  
բերեց: Լավաջ հացերը յերկտակ ծալած, կերակրամանի  
բերանին հաստ թելով կապած, աղջիկը դրեց ծառայի ա-  
ռաջը թե՝

— Հայրս ասաց, թող հացն ու կերակուրն ուտի, բայց

առանց հացի կողքից կտրելու, ու կերակրամանի բերանը  
բաց անելու...

Ծառան մնաց շվարած: Ինչպես ուտեր հաց, առանց  
կողքիցը կտրելու. կամ ինչպես ուտեր կերակուրը, առանց  
ամանի բերանը բաց անելու... Տեսավ ճար չկա, աղջկան  
ասաց.

— Վերցրու տար, չեմ ուտում:

Յերբ աղջիկը հացն ու կերակուրն առավ գնաց, ծա-  
ռան ել առավ յեղներն ու արորը և յեկավ տուն: Տերը  
հարցրեց.

— Այ տղա, վար արիր:

— Չե արա, — ասաց ծառան. — շունը բարձրացավ  
նստեց մի մեծ ժայռի վրա, այնպես վոր, վոչ այնտեղ  
բարձրանալ կարելի չեր, վոչ ել վարել...

— Ե՛հ յեղբայր չեղավ. մեր կապած պայմանի հա-  
մաձայն, յես ինչ վոր հրամայեմ, դու պարտավոր ես ճշտու-  
թյամբ, տեղը-տեղին կատարելու. չես կարողացել կատա-  
րել — ուրեմն տանուլ տվեցիր... Պայմանը պայման ե. — ա-  
սաց հարուստն ու ծառային կապելով ասնից, մեջքից մի  
շերտ կաշի քերթեց ու վարձիցն ել գրկելով, տանից դուրս  
արավ:

Խելոք յեղբայրը հասավ տուն, մղկտայով ու լալով...

— Այդ ինչ ե պատահել յեղբայր. ո՞վ ե քեզ այդ ո-  
րին գցել. — հարցրեց գիժ յեղբայրը գլխին տալով:

Խելոք յեղբայրը պատմեց ամբողջ գլխին յեկածը...

— Լավ, դու մնա տանը, հիմա ել յես կգնամ, — ասաց  
գիժ յեղբայրն, ու նրան դեղ ու ճար անելուց հետո, մի Լուս  
առավոտը շատ վաղ մահակն առած ընկավ ճանապարհ:

Գնաց հասավ նույն գլուղը, կանգնեց հրապարակում,  
մեկ ել տեսավ հարուստը յեկավ: Խելոք յեղբայրը պատ-  
մել եր գիժ յեղբորը, վոր իրան այդ որին գցողը, մի  
վոտքից կաղ, կապուտաչք ու շեկ մազերով մի հարուստ



մարդ եր: Գիժ յեղբայրը նրան տեսնելուն պէս ճանաչեց:

Հարուստը տեսնելով գիժ յեղբորը, մոտեցավ.

— Այ տղա, ծառա չե՞ս մտնի:

— Ինչո՞ւ չե՞ս աղա,— ասաց գիժը:

— Դե արի գնանք տուն: Գնացին տուն, հարուստն ասաց.

— Յես քեզ հետ պայման կկապեմ մի տարի ժամանակով. և յեթե ինչ վոր ասեմ, ինչ գործի վոր դնեմ, ճշտությամբ, տեղը-տեղին կատարեցիր—տարվա վերջին ինձանից կստանաս քո վարձը՝ հարյուր մանեթ փող, իսկ յեթե չկարողացար իմ ասածներս ճշտությամբ կատարել, այն ժամանակ յես քեզ վոչ մի կոպեկ աշխատավարձ չեմ տա, ու բացի այդ—մեջքիցդ ել մի շերտ կաշի քերթելով—կհեռացնեմ... Հիմա թե համաձայն ես, ասա, պայման կապենք, անցիր աշխատանքի. թե չե, թող գնա գործիդ: Գիժը թե՛

— Համաձայն եմ. բեր պայման կապենք:

Ու պայմանը կապեցին. գիժը մնաց հարուստի մոտ ծառա:

Հարուստը սովորութիւն ուներ այդպիսի խեղճ ու չքավոր մարդկանց ծառա վերցնել, վողջ տարին աշխատեցնել, հետո, տարվա վերջին, վորպէսզի աշխատավարձ չտար, դիտմամբ մի դժվարին ու անկարելի աշխատանք եր առաջարկում, վոր իհարկե, կատարել չէին կարողանում, ու նա «համաձայն պայմանագրի», բացի աշխատավարձից զրկելը, նաև խեղճ ծառաների մեջքից մի-մի շերտ կաշի քերթելով, մղկտացնելով, (վորը իրան մեծ զվարճութիւն եր պատճառում), ճանապարհ եր դնում: Բայց գիժ յեղբոր հանդեպ, հարուստը սխալվեց յուր հաշիվների մեջ...

Հենց առաջին որերից, հարուստը տեսավ վոր գիժը իրան այնպէս չի պահում, ինչպէս ծառային ե վայել:

Դնում ե մինչև ճաշ, աշխատանքը կատարում ե դանդաղ ու անուշադիր, գործը շինելու տեղ — քանդում ե...

Նկատողութիւն անելիս ել, հարուստին տնագէտ անում ու հրհռում...

Յերբ հարուստը տեսավ վոր դրանից բան դուրս չի գալու, վորոշեց յուր սովորական խորամանկ միջոցները գործադրել, ու ծառայի մեջքից կաշին քերթելով հեռացնել, և նրա տեղը մի ուրիշ, խեղճ ու հնազանդ ծառա ճարել...

Այդպէս վորոշելուց հետո, նա կանչեց ծառային թե՛

— Այ տղա, առավոտը կլծես արորը, շունն ել հետդ առած կգնաս դաշտ. վորտեղ վոր շունը նստի—այնտեղ ել կսկսես վարել:

— Շատ լավ,— ասաց ծառան:

Մյուս որը գիժը, յեզներն ու արորը առավ, շանը կանչեց, ու գնացին դաշտ: Շունը, վոր առաջուց սովորեցրած եր, ելի բարձրացավ ժայռի վրա ու նստեց այնտեղ:

Գիժը այդ բանը վոր տեսավ, առավ մի քար, ու անյապէս խփեց շան կողքին, վոր շունը գլորմղոր ընկավ ցած ու սատկեց: Հետո նա սատկած շունը գցեց մի տափարակ տեղ, ու սկսեց շան շուրջը վարել:

Յերբ ճաշ դառավ, տիրոջ աղջիկը հացը բերեց:


Նլի լավաշները յերկտակ ծալած, կերակրամանի բերանին հաստ թելով կապած, բերեց դրեց գժի առաջ թե՛

— Հալըս ասաց—թող հացն ու կերակուրն ուտի, բայց առանց հացի կողքից կտրելու, ու կերակրամանի բերանը բաց անելու...

— Շատ լավ,— ասաց գիժն, ու դանակը հանելով, կերակրամանի բերանի ուղղությամբ, ներսի կողմից կլոր ձեւով հացերը կտրեց վերցրեց, ապա բացված անցքով ամանի միջի կերակուրն ուտելուց հետո, կերակրամանը լետ տվեց աղջկան, առանց «հացի կողքից կտրելու, ու ամանի բերանը բաց անելու», թե, վերցրու տար...

Յերբ աղջիկը տուն յեկավ, ու հարուստն ամեն ինչ





իմացավ, ինքն իրեն ասաց. «չե՛, այդ գիժը մյուս ծառաների նման չի. պետք է դրանից, վորքան հնարավոր է—չուտ ազատվել»...

Յերեկոյան, յերբ գիժը դաշտից տուն յեկավ, հարուստը կանչեց նրան ու պատվիրեց.

— Այ տղա, յեզները կապիր, ու առաջները անքան դարման (հարդ) լցրու, վոր յեզների գլուխները թաղվեն դարմանի տակ...

— Շատ լավ, — ասաց գիժը, ապա սկսեց ինքն իրան մտածել. «ախր յես ինչքան ել վոր դարման լցնեմ, յեզների գլուխները դարմանի տակ թաղել չեմ կարող. թափ կտան գլուխները կհանեն. ի՞նչ անեմ հապա»...

Քիչ մտածելուց հետո մտնելով գոմը, յերկու յեզն ել մորթեց, գլուխները դրեց մսուրն ու դարմանով ծածկեց...

Յերբ նա տուն յեկավ, հարուստը հարցրեց.

— Յեզների գլուխները թաղեցի՞ր դարմանի տակ:

— Թաղեցի աղա, ինչպես չե, — սրտալի պատասխանեց ծառան.

Հարուստը գնաց գոմն, ի՞նչ տեսնի... յերկու յեզն ել մորթել է, գլուխները դրել մսուրն ու դարմանով ծածկել...

Յեկավ տուն.

— Այ տղա, յեզներն ինչո՞ւ ես մորթել:

— Ի՞նչ է աղա, ձեռք ես առել ի՞նձ. բա կենդանի անասունի գլուխը կարելի՞ չե դարմանի տակ թաղել. չե՞ վոր պարտավոր եյի քո ասած խոսքը ճշտությամբ, տեղը-տեղին կատարելու, իսկ առանց մորթելու, ինքդ ել գիտես վոր, վոչ մի կերպ չե՞ր կարելի յեզների գլուխը դարմանի տակ թաղել...

Ճարն ինչ. հարուստը տեսավ վոր ճիշտ է ասում, լռեց:

Բերին յեզները քերթեցին, հարուստը մտաիկ գլուղում ամուսնացած աղջիկ ունեւ. բավականին միս լցնելով պարկի մեջ, տվեց ծառային թե՛



— Այդ միսը տար հասցրու աղջկաս, ու յետ արի:  
Գիժը առավ միսը, տարավ ինչ վոր տեղ պահեց, մի  
հատ խոշոր վոսկոր թողեց պարկի մեջ, գցեց շալակն ու  
տարավ հարուստի աղջկան:

— Այս ի՞նչ միս ե, — հարցրեց հարուստի աղջիկը:

— Հայրդ յերկու յեղ ե մորթել, այս ել քեզ բաժին  
ե ուղարկել:

— Յերկու յեղ ե մորթել, ու այս վոսկորի կտորն ե  
ուղարկել ինձ բաժին, — ասաց աղջիկը նեղացած, — վեր-  
ցրու յետ տար, հարկավոր չե:

Գիժը յետ յեկավ, ելի պահած միսը լցրեց պարկն ու  
բերեց դրեց տիրոջ առաջը:

— Ինչո՞ւ բերիր աչ տղա:

— Տարա, չընդունեց, թե — քիչ ե:

Տերը մի բան ել ավելացրեց, ու ելի ուղարկեց:

Գիժն ելի նույն ձևով վարվեց, տարավ ու յետ բերեց:

Յերրորդ անգամն ել հարուստը միսը ավելացրեց, ու  
ասաց ջղախացած.

— Այս անգամ ել տար, վերցրեց — վերցրեց, թե չվեր-  
ցրեց, խփիր գլխին, թող արի...

Գիժը դարձյալ միսը պահեց, ու աչս անգամ յերկու  
հատ խոշոր վոսկոր թողնելով պարկի մեջ, տարավ հարուս-  
տի աղջկան... Յերբ աղջիկը տեսավ վոր նա նորից յեկավ,  
ջղախացած գոչեց.

— Տո, քանի՞ գնաս-գաս. վերցրու շուտ կորի գնա,  
ել յերեսդ չտեսնեմ, անպիտան...

— Ուրեմն աչս անգամ ել չես վերցնում համա...

— Չե, թող գնա, բղավեց աղջիկը...

— Բա յեղամ, ախր յես մեռա գնալով-գալով, — աս-  
աց գիժն ու պարկը պարսատիկի պես պտտեցնելով, տա-  
րավ բերեց ու խփեց աղջկա գլխին... աղջիկը ուշաթափ-  
վեց, վեր ղնկավ, իսկ գիժը հանգիստ սրտով թողեց,  
տուն յեկավ:

— Հը՛, վերցրեց թե չե, — հարցրեց հարուստը:

— Չե, չվերցրեց:

— Հետո, ի՞նչ արիր:

— Ի՞նչ պետք ե անելի. խփեցի գլխին, թողի յեկա:

— Ի՞նչպես թե խփեցիր...

— Այ աղա, դու ինքդ չասացիր, վոր յեթե այս ան-  
գամն ել չվերցնի, խփիր գլխին ու թող արի. յես ել քո  
հրամանը կատարեցի, ու խփեցի գլխին... Բա ի՞նչ անելի.  
խոսքդ չկատարեցի վոր մեջքիս կաշին քերթեյիր...

Հարուստը տեսնելով վոր «ըստ պայմանի» ճիշտ ե ա-  
տում, ճարահատված լուեց:

Հարուստը տեսավ վոր դուր ե, ինքը գժի հեռ  
գլուխ գնել չի կարողանում, շուտով տարին ել կլրանար,  
ու գիժը հարյուր մանեթ փողը կպահանջեր, ահը սիրտն  
առած, մի գիշեր կամացուկ կնոջն ասաց.

— Այ կնիկ, իմ բոլոր հնարքներս սպառվեցին, բայց  
մեր այս գիժ ծառային հաղթել չկարողացա: Մինչև հիմա  
իմ ցանցն ընկած ծառաներից վոչ մեկին ել նման չի սա:  
Տարին լրանում ե, ու նա հարյուր մանեթս կառնի ան-  
պատճառ... արի, այ կնիկ յերեխաներին ուղարկենք հո-  
րանցդ մոտ, մենք ել, ինչ ունենք-չունենք թաղենք, ծած-  
կենք, դու ել մի քիչ գաթա-հալվա պատրաստիր, ու մի  
գիշեր գժին թողնենք քնած, մենք գաղտնի փախչենք, այս-  
տեղից հեռանանք... Գիժն իհարկե կթողնի կգնա, իսկ մենք,  
մի քիչ ժամանակից հետո, նորից հետ կգառնանք, թաղածնե-  
րը կհանենք, ու ելի առաջվա նման հանգիստ կապրենք  
մեր տանը...

Կինը համաձայնեց:

Գիժը, վոր սուտ քուն դրած խռմիում եր, ինչ վոր  
ասացին — բոլորը լսեց:

Մյուս որը հարուստը յուր յերեխաներին ուղարկեց  
աներանց տուն, ինչ ունենք-չունենք թաղեց ծածկեց, կինն



եւ գաթա-հալվա պատրաստեց, լցրին մի մեծ ջվալի մեջ, ու դրին տան անկյունը:

Այդ միջոցին, թեև գժին զանազան պատրվակներով ուղարկում էին այս ու այն կողմ, բայց նա ուշի-ուշով հեռում էր դրանց արարքներին...

Յերբ ջվալը լցրին ու դրին անկյունը, գիժը գլխի ընկավ, վոր հարուստը վախճելու յեր...

Գիշերվա կեսին, յերբ հարուստն ու կինը խորը քնած էին, գիժը վեր կացավ, ջվալի բերանը բաց արավ, մտավ մեջը, գաթա-հալվան շարեց շուրջը, ու ներսից ջվալի բերանը կապկպելով, հանդիստ նստեց և սկսեց գաթան անուշ անել...

Գիշերվա մի ժամանակ հարուստն ու կինը վեր կացան, շորերը հագան, հարուստը ջվալը շալակեց ու շատ զգուշ, վորպես թե գիժը չիմանար, տանից դուրս յեկան...

Շատ գնացին թե քիչ, լույսը բացվեց, հասան մի գյուղ: Յերբ գյուղի միջով անցնում էին, չորս կողմից շները թափվեցին նրանց վրա: Հարուստը, ահագին բեռը շալակին, չգիտեր կնոջը պաշտպաներ, թե շներին քշեր... Նա ձեռքի փայտով մեկ այս շանն եր խփում, մեկ այն, բայց ազատվել չեր կարողանում: Շները նրանց կալմեջ արած, սարսափելի հարայ-հրոցով, քիչ եր մնում մարդ ու կնոջ զզգգելին... Այդ ժամանակ հարուստը սրտնեղած, բղավեց՝

— Ա՛խ, ո՛ւր ես մեր գիժ ծառա... հիմի այստեղ դուրս գայիր, շներին կոտորեցիր...

Ու գեռ խոսքը բերանումն եր, վոր գիժը ջվալի միջից ձայն տվեց.

Այստեղ եմ ազա ջան, մի վախենա, ջվալը գիր գետին, դուրս գամ, յես գիտեմ ինչ կանեմ...

Հարուստի թեվերը թուլացան, նա ջվալը գետին դրեց. գիժը դուրս յեկավ ջվալից, տիրոջ ձեռքից փայտը խլելով հասավ շներին, ծեծելով, քշեց հեռացրեց, ու լեռ գառնալով ասաց հարուստին.





— Հոգնե՛լ ես աղա ջան, թող հիմա ել ջվալը յես շալակեմ։ Կարծեմ ուխտ եք գնում չե՞, միասին գնանք...

Ու այդպես այժմ ել ծառայի հետ միասին շարունակեցին ճանապարհը։

Շատ գնացին թե քիչ, արևը մայր մտնելու ժամանակ հասան մի գետի ափ։

Նստեցին այդտեղ, հաց կերան, ու վորոշեցին այդտեղ ել գիշերել։

Յերբ քնեցին, ելի գիժը իրեն սուտ քուն դրեց ու սկսեց խռմփալ։

Գիշերվա կեսին գիժը փափսոցի ձայն լսեց. նա ափանջները սրեց և լսեց վոր հարուստը կնոջն ասում ե.


— Այ կնիկ, գիշերվա կեսին, յերբ գիժը խորը քնած կլինի, յես քեզ կիմացնեմ, վեր կկենաս, քնած տեղը կբռնենք գժի ձեռք ու վորտից ու կշարտենք գետը. թող խեղդվի գնա, հոգիներս աղատվի, մենք ել թողնենք գնանք մեր տունը...

Գիժն այդ վոր լսեց, ել քունը չտարաւ։ Յերբ քիչ հետո տեսավ վոր նրանք քնեցին, զգուշ յեկավ մտավ հարուստի ու նրա կնոջ մեջտեղը, ապա հարուստի կնոջը բռնեց թիւով, ասաց կամացուկ.

— Այ կնիկ, ժամանակն ե, վեր կաց գժին գցենք գետը...

Հարուստի կինը քնաթաթախ յեկավ, ու մութ տեղը, գժի հետ միասին հարուստի թեվերից ու վորտերից բռնելով ահագին բարձրությունից շարտեցին գետը... հետո, հենց այնպես քնաթաթախ ել զլուխները դրին գետին ու նորից քնեցին...

Առավոտը մեկ ել հարուստի կինը աչքերը բաց արեց, ու ի՜նչ տեսնի... մարդի տեղը գիժ ծառան եր պառկել կողքին...





Հարուստի կիրնը մի քիչ լաց ու շիվան արեց, գլխին  
տվեց, բայց եւ ճարն լինէ...

Գիժը հարուստի կնոջը ճամբու դրեց թե՛

— Գնա հիմի եւ դու աղքատությունն արա, ուրիշի  
մոտ ծառա դարձիր, վոր աղքատի դրությունն իմանաս...

Իսկ ինքը, նորից հետ դարձավ, հարուստի թաղած վողջ  
կարողությունը հանեց, խելոք յեղբորն եւ բերեց մօտը,  
ու միասին կերան խմեցին, քեֆ արին:



891.99-93





ԳԻՆԸ 60 ԿՈՂ.

73

8721

В Е Р Д И  
БОГАЧ И ЧУДНОЙ СЛУГА

Гиз Арм ССР Ереван 1940г.